ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-19/28» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով օդորակման սարքերի /այսուհետ Ապրանք/ ձեռքբերման գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի

ք. Երևան

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 28.08.2019 ժամը 15.00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ/ Հ. Սարոյանը

Անդամներ՝

Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ/ Ռ. Տ. Սահակյանը

Ս. Քոչարյանը

Գնման Պատասխանատու /Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ/՝

Ս. Փայասլյանը

Լ. Կարասակալյանը

Հանձնաժողովի քարտուղար՝

Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/ՄՀմ/ Մ. Նիկոլյանը

1. <u>Ընդունել ի գիտություն.</u>

1.1 ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը ՀՀ պետական եկամուտների կոմիտեին /Կոմիտե/ կատարել է հարցում՝ Վեգա Ուորլդ, Փրիթի Ուեյ ՍՊ ընկերությունների հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

1.2 Ղեկավարվելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով առաջին տեղ զբաղեցրած մասնակցից պահանջվել է ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի գ/ պարբերությամբ պահանջվող՝ որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը. ապրանքի տեխնիկական բնութագիրը, առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (ամբողջական նկարագիր):

2. <u>Հանձաժողովը արձանագրեց</u>

2.1 Կոմիտեից սահմանված ժամկետում մասնակիցների վերաբերյալ՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ստացվել է դրական եզրակացություն /կցվում է/:

2.2 Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներ՝ Վեգա Ուորլդ և Փրիթի Ուեյ ՍՊ ընկերությունների կողմից էլեկտրոնային եղանակով պահանջվող փաստաթղթերը ներկայացվել են սահմանված ժամկետում /կցվում է/:

2.3 Փրիթի Ուեյ ՍՊ ընկերության ներկայացրած 1 չափաբաժնով նախանշված ապրանքի տեխնիկական բնութագիրը ոչ ամբողջական է, մասնավորապես՝ «ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-19/28» ծածկագրով ընթացակարգի հրավերով շրջապատող միջավայրի պահանջ է դրվել «<u>Աշխատանքային ջերմաստիճան՝ -10° to 43°C»,</u> Փրիթի Ուեյ ՍՊ ընկերության նշված GORENJE /KAS 26 INV օդորակիչի տեխնիկական պարամետրերում չեն երևում շահագործման ջերմաստիճանները:

3. <u>Հանձնաժողովը որոշեց</u>

3.1 Կարգի 47-րդ կետի համաձայն՝ նիստը կասեցնել և էլեկտրոնային եղանակով ծանուցել մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 04.09.2019 ժամը 12.00 հստակեցնել սույն արձանագրության 2.3 կետով նշված պարամետրը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0

Նիստը շարունակվել է 03.09.2019թ. ժամը 12.00-ին

Ի գիտություն

Փրիթի Ուեյ ՍՊ ընկերության կողմից մինչև սահմանված ժամկետը՝ 02.09.2019 ներկայացվել են սույն արձանագրության 2.3 կետով պահանջվող ապրանքի ամբողջական նկարագիր, որը համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին /կցվում է/:

4. Հանձնաժողովը որոշեց

4.1 Կոմիտեից ստացված դրական եզրակացությունը և մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը գնահատել բավարար

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0

4.2 Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վեգա Ուորլդ ՍՊԸ-ին 2,3 չափաբաժիններով, Փրիթի Ուեյ ՍՊԸ-ին 1,4 չափաբաժիններով ճանաչել **ընտրված մասնակիցներ:**

Ընդունվել է որոշում. կողմ՝5, դեմ՝ 0

4.3 . Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը /կցվում է/:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Հ. Սարոյան

անդամներ՝ _____ Ռ. Տ. Սահակյան

_____ Ս. Քոչարյան

_____ Ս. Փայասլյան

_____ Լ. Կաբասակալյան

քարտուղար՝ _____ Մ. Նիկոլյան